

# ՅՈՐԲԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ

Գործու գիտին և Տպագրութեան Յո-  
րբելանի տրիբյ շատրաներ կան թե  
լազրական արդի շատ գրականութիւնը  
բարեփոխու, կազմուելու և վերակե-  
զանացելու համար:

Նախքան անոնց մասին շնոր ընելիք  
թեկադրութիւններու և հայեացքները ա-  
ռաջ բերելը, մենք պիտի մատնանիլ ը-  
նենք Յորբելանեան տրիբյ խիստ ու-  
չազարու պարագայ մը, որ աս նուազն  
կենցաղագրական պակաս և ապերախ-  
տութիւն մը կը շեշտէ հանդէպ անոնց,  
որոնց պարտական ենք մեր գիրն ու գր-  
ականութիւնը և որոնց համար է որ կը  
սանձանուի այս Մեծ Յորբելանեան  
տոնապատութիւնը:

Մեծ արդարև ստոյգ է թէ մենք իր  
երաստագարտ թոռները Արցոնց Ման-  
կայ և Մետրապոլիտ տօննք այսօր Հայ  
գրին և խօսքին 1500 ամեայ Յորբելանը  
ապա ուրեմն ինչու յիշատակութիւն ան  
զամ չենք ընել այն զեչուին, որ Ման-  
կին և Մետրապոլիտն էին: Արդի է գիտ  
կան թէ մեր այս Յորբելանեանը ի յիշա  
տակ մեր նախնիքներուն լեզուին է որ կը  
կատարենք թէ մեր արդիական լեզուին:  
Այս բանը պետք էր իր նպատակով  
խաւ ճշդուել և շեշտուել:

Բաւական չէ որ Մետրապոլիտ տոններ  
անխտրի վը գործածեն հին և նոր հայ լե-  
զուն, պետք էր ճշդիլ նաև թէ անոնք  
հինիս սեպականութիւնն են. թէ նորին  
ու ժառանգորդին: Այստեղ է որ կը ծագի  
իրաւաբանական հարց մը, զոր լուծելու  
հարկ չենք տեսներ, քանի որ ամենքս ալ  
զիտենք թէ Մետրապոլիտ գիրն ու գրա-  
կանութիւնը կը պատկանին Հայոց հին  
զարթութեան, որուն այս առթիւ տալու  
էինք առաջնութեան իրաւունք ու պատի  
անցը և անոր վրայ ձեռնու էինք Մեծ  
Յորբելանեան կատարումն:

Բայց զարևորելով դիտեցինք թէ ոչ  
միայն խօսքը չի ըլլար նախնի հայ շրջ  
րութեան, այլև մեր կազմելիք հանդէս  
ներուն և բանախօսութեանց մէջ հին լեզ  
ուին խօսքն անգամ չի կայ և անոր մա-  
սին իշատակութեան համար ամենափոքր  
տեղ մը անգամ արուած չէ մեր Յորբելան  
նական և իս ծրագրիներուն մէջ: Արիկա  
ապերախտութիւն մըն է և նախաձե-  
լանդութիւն իր ունենալ չե՞թաղքեր մեր  
լեզուին հանդէպ: Յորբելանական հանդէս  
ներու ծրագրիներուն և յայտագրիներուն  
մէջ խօսուելիք չի լինելու. ճտեղու, եր  
գերու և արտասանութեանց եթէ ոչ մեծ  
մասը, գոնէ ինչո՞ւ նուազագոյն մէկ մա-  
սըն ալ կազմելու չէին նախնեաց հայ մա-  
տենագրութեան նմոյշներն: Արիկա դեռ  
մինչև կիրակի օրը արդարօրէն նկատելի  
ու շարժութեան առարկայ կրենք սմէ-  
անոնց, որոնք Յորբելանական կարգադ  
րութիւններու խնամքն են ստանձնած:

Ոչ միայն գր քար լեզուին տեղ տալու  
էինք Յորբելանական յայտագրիներու մէջ  
այլ և պարտաւոր էինք զայն կանոնական  
կերպով պարտադրել այս առթիւ. որ իբր  
մեր լեզուի էական մասը, ալ յետ այսու  
ուսուցումի համար պարտադրել ըլլայ բո-  
լոր հայ վարժարաններու մէջ, իբրև մայր  
և արմատական հայ լեզու, ինչպէս եւրո  
պացիք պարտաւորիլ կերպով կրնն Յու-  
նարէնի և Լատինարէնի ուսուցումն իբր  
անհրաժեշտ տարր իրենց մայրենի լեզուին  
համար, քանի որ գրաբարէն է որ իբր  
լսեմաբան փոխ կառուին բազմաթիւ քե-

րականական ձևեր և լեզուային ճոխ ա-  
տարներ:

Այս շատ կարևոր դիտողութենէն վերջ  
գանք քանի մը խիստ անհրաժեշտ նկա-  
տաութիւններու. որոնք արդի հայ գր-  
ականութիւնը բարեփոխու, կազմուելու  
և վերակենդանացնելու համար մեծա-  
պէս կրնան ծառայել. եթէ ի հարկէ անոնք  
նկատառութեան տունուին:

Ատոնցմէ մենք անապիտ տեղը կը  
գրաւէ արեւելեան և արևմտեան բարբա-  
ներու միացումը և գրական ու վարժա-  
րանական ընդհանուր լեզու մը ստեղծելու  
խնդիր: Կովկասահայ և թրքահայ բար-  
բաները այնպէս իրարմէ սկսած են տար-  
բերիլ և հեռանալ, որ իրար սկսած ենք  
չի հասկնալ: Պետք է որ ընդհանուր կազմ  
ունենայ մէկ գրական լեզու բոլոր երկրի  
վրայ, և զաւտարարաբաններն մէկը մա-  
նանաւոր չիլին. ինչպէս եղած է Կովկասի  
մէջ: Օր մը. քանի մը գր վերջ, կրնայ  
լեզուային այս բաժանումը այն աստիճան  
ճայրապետութեան հասնիլ որ իրար չի հաս-  
կնանք: Հետևաբար պետք է ընտրութիւն  
ընենք կամ թրքահայ բարբառը և կամ  
կովկասահայ բարբառը գործածելու իբրև  
գրական լեզու ընդհանուր ազգին. քանի  
որ լեզուի բաժանումը կրնայ ազգային  
բաժանումի առաջնորդել:

Տառերու նշագրանութեան գալով մա-  
նանաւոր Տանկահայերս պետք է ճշդուել  
Մետրապոլիտ կարգ մը տառերու վազմը  
նշուել և այս մասին օգտուինք Արա-  
րատեան Բարբառի տառական աւելի ու-  
ղիղ նշագրութենէն:

Ուղղագրական տարբերութիւնները  
պետք է բացարձակապէս հարթել և չի՞ն  
ղու որ կարգ մը ինքնակոչ վերանորոգիչ  
ներ իրենց նորանսար ուղղագրութիւնով,  
իրք թէ լեզուն դիւրացնելու մտօք. լեզ  
ուին վաղեմի ուղղագրութիւնը սպաննեն,  
ինչպէս կրնն Կովկասի մէջ գրելով «հալ»  
(հաւ) «նվ» (ն), «պատվել» (պատուել) և  
բոլոր «Լ»ներու տեղ գործածելով «վ»  
տառը, և դարձնալ բառերուն վերջին  
ծայրը գործածուող անձայն «յ» գիրը գեղ-  
ջելով՝ օրինակ «տղա» (տղայ), «քահանա»  
(քահանայ) ևն: Արիկա ոչ թէ լեզուն  
ուղղագրութիւնը պարզել, այլ լեզուն  
չգիտնալով շարչարել ու սպաննել է պար-  
զապէս:

Տղադարձներու համար լեզուի կա-  
տարուն ձև մը, վանկերու բաժան մը  
կատարելով բնական բարձրագուծ վրայ  
և ոչ թէ արհեստական:

Հոլովներու ձանձրացուցիչ միօրինա-  
կութենէն խուսափել և փոխառութիւն-  
ներ ընել գրաբարի հոլովակերաններէն:

Ձեռ վախալ լեզուին քերականական  
զանազան ձևերու, նշաններու ուղղա-  
գրական զօժանարթեանց, սողադարձի  
և աղեալ խթիթի բացառութիւններէն և  
գարտադրութիւններէն. քանի որ մեր լեզ-  
ուին քաղցրութիւնը, նրբութիւնները և  
զանազան գեղեցկութիւնները այդ զրծ-  
ուարութեանց մէջ կը կայանան:

Թուրքերէն բառերով և հայկական տա-  
րերով կատարուած թարգմանական, լրա-  
գրական գրականութեան վերջ տալ  
թուրքերէն և Ռուսերէն, կամ այլ լեզ-  
ուերով խօսելու մեր տուններուն և շուկայի  
կեանքին մէջ բացարձակապէս արգելիլ  
ընդունելով որ պատնէութիւններ շատ  
ուրիշ մեր երկրներուն մէջ զանոնք  
գործածելու և սորվելու:

Բացարձակապէս վտարել մեր լեզուին  
մէջ մտած կարգ մը բառերը, որոնք մեր  
լեզուաբանական շրջանին ծիծաղելի պար-  
զներն են: Եղանք (Եղանքի ձևով նմոյշ մը  
պիտի թիւնք մեր վաղուան թիւով հա-

յնպիսիական լեզուն, որուն վրայ ու-  
ղադրութիւն գործեն):

Տանկահայ վարժարաններու մէջ գոր-  
ծածուած դասագրքերէն արտաքսել  
ուսանայ բարբառով գրուած հատուած-  
ներն. քանի որ անոնք չարադասութեան  
և ուղղագրական տեսակէտներով մեծա-  
պէս կազդել: և կը վնասեն մանուկը. իսկ  
եթէ ոմանց նպատակն է ուսանայ գրա-  
գէտները ծանօթացնել թրքահայ ուսա-  
նողութեան, ասոր համար միջոցներ չեն  
պակտի:

Մեր այս քանի մը դիտողութիւննե-  
րը, որոնց վրայ կրնայինք դեռ բարդել  
ուրիշ շատ երեւոյթներ ալ, կրննք անոր  
համար, որովհետև Մեծ Յորբելանը առիթ  
մըն է Հայ գրին և Հայ խօսքին շուրջ  
անդրադասուելու և հայ Գրականութիւնը  
բարեփոխու, կազմուելու և վերակե-  
զանացնելու մասին ալ քիչ մը խորհելու:  
Եւ կը կարծենք թէ ասոր ժամանակը  
հասած է և պետք է Յորբելանեան վերջ  
գործի ձեռնարկել: